

ՊՍՏՄՈՒԹԻՒՆ ՎՐԱՅ

(Տես Հատ. ԽԱ, ՊՐ. Ա, էջ 50):

ԳԼՈՒԽ Բ

Արշաւանք խաղաղաց, և գերեկ գթորդոմեա-
նըս, և ընդ հարկաւ կացոցանկ գերկիր եղացւի-
— Յաղագս Ահարապեայ առաւարկին և Արքի-
տոնի, և կոտորելոյ սորա զխաղիս, և տիրելոյ
երկրին վրաց, և յաղագս շինութեան Մցխերա
քաղաքի. — Յաղագս խառնութեան տանն Ար-
քիտոնի, և ազատութեան վրաց ի լծոյ Պար-
սից, և վերստին հարկելոյ եղցին. — Յաղագս
անցանելոյն Մովսիսի ընդ ծովն կարմիր. —
վտարանշարին թորգոմեանց ի Պարսից՝
միարանութեամբ ազգաց գաղթելոց ի վիրս. —
Յաղագս աշայտորեան հայկական խօսից ի
վիրս յազգացն եկելոց, և վտարարելոյ բա-
րոց ազգին. — Յաղագս գործոց վահրամայ
որդոյ Սպանդարի. — Յաղագս կազմութեան
վրացի բարբառոյ:

Եայնմ ժամանակի զօրացեալ ազգն
խաղրաց ¹ կուռէին ընդ ազգին լեկաց
և կովկասու. որք անկեալ ի կարիս՝
խնդիր արարին ի տունն թորգոմայ
վեց ազգաց, որք ի խնդութեան և ի
խաղաղութեան կային յաւուրսն յայ-
նոսիկ, գալ ոգնել նոցա: Որք և չոգան
իսկ յօժարութեամբ և կազմ պատ-
րաստութեամբ, և անցին ընդ լեռն
կովկասու, և գերեցին գերկիրն խաղ-

¹ խաղիս կամ խաղարս կոչէին նախնի վիրք
զվկութեան, և գերկիր նոցա խաղարեթի, Սար-
մատիա և Սիւրեթի կոչեցեալ ի մերայնոց. յոր
և արաւելոյ Հայոց՝ հարուածն հասցին ոն-
հարինս ի վրայ ազգին. որոց ի վրէժ քնու-
վառեալ միարանեալ ընդ այլոց Հիւսիսականաց
ի զանազան ժամանակս անցին բազմութեամբ
ընդ դուռն Արուսեանց, և գերեցին Հայոց և
զվիրս:

² Պրոսէ կամ ընթեռնուլ ճարտէրքն խառն:
³ Երեք գլխաւոր Իրուսք կամ Պահակք յի-
շին ի կովկաս ըստ աշխարհագիր պատմութեան
առաջին և ծանօթն քան զայլս Պահակն Իար-
սանգայ, որ և Պահակ Հոնաց, Իրուս Արուս-
եանց, և կամ Ալանաց, և կամ Կասպեց, (ի Թուր-
քաց՝ Տեմիր-Իսպիս, և յԱրաբաց՝ Պապ-Էլ-

րաց ի ձեռն Դուժուկին, որդւոյն Տի-
րիթիսոյ՝ որ կոչեաց զնոսա յօգնակա-
նութիւն, Զկնի այսորիկ դարձեալ ժո-
ղովեցան խաղիւրք, և եղին իւրեանց
թագաւոր, և եղն բանակ մեծ, և ելին
ընդ Դուռն Դարբանդու ի վերայ թոր-
գոմայ՝ մինչև ցԱրարատու գաշտն և
Մասեաց, և կոտորեցին և գերեցին ըզ-
նոսա, զի էին անբաւ: Եւ մնացին
միայն, բերդաքաղաքքն ժմակայինք, և
Մոխրաբերդն ², Խուռնան, և Սամոյլտէ
և Դաբի և Էգրիս: Եւ գտին խաղիւրքն
դուռն մի այլ, որ ասի Դարիայայ ³. և
յաճախեցին զգալն ասպատակաւ ի
վերայ թորգոմայ, և արարին ընդ հաբ-
կաւ: Եւ զառաջին գերեալն ի Հայոց
և ի վրաց՝ ետ թագաւորն խաղրաց որ-
դւոյ Ուովբոսի, և մասն ինչ ի
կովկասու՝ յԱմեկայ գետոյն մինչև
ցապառաժն լեռինն առ արեւմուտք: Եւ
չինեաց Ուովբոս ազգան իւրով գեր-
կիրն՝ որ կոչի Օսէթ: Իսկ Դերձուկ ոմն,
այր երեւելի յորդուոյն կովկասու, չո-
գաւ ամրացաւ յանձուկս լեռինն, և
տայր հարկս թագաւորին խաղրաց. և
կոչեաց զանուն տեղւոյն Դուրձկէթ:
Այլ և նոյն թագաւորն խաղրաց ետ

Իվկապ). երկրորդ՝ Պահակն Ճորայ (այժմեանն
Ճարայ Պեղաւան), և երրորդ՝ Դուռն Դարիա-
լայ, կամ Դուռն Կովկասու, զոր, ըստ բանից
պատմին, երկէ գտեալ նախ խաղրաց: Զգր-
կից և զանուանի Դրանցս կարի յոյժ են կարծիք
և ընդգծեալ խառնութիւնք առ գետունս, զորոց օ-
տար համարիմ ի մէջ բերել աստանոր զժուռն
իւրաքանչիւր, որք փոխանակ պարզելոյ՝ առա-
ւել ևս գոտարականն ընծայէն զուժումն
խնդոյն: Զայս եւեթ ոչ անդէպ համարիմ յիշել
զիս առ բազմուն Դուռն Ճորայ՝ նոյն համարի ընդ
Դարբանդայ (Տերպէնտ) կամ Դրանն Հոնաց,
զոր արքայք մեր Արշակունիք զգուշութեամբ
պահէին ընդգծել հրոսակին Հոնաց: յեւ որոյ
անցեալ ի ձեռս Արուսեանց՝ կոչեցաւ յանուն
սոցա Արուսեանց Դուռն:

հօրեղբորորդւոյն իւրոյ զմասն ինչ Լեկանայ, 'ի ծովէն Դարբանդայ յարեւելից՝ մինչև ցգետն յարեւմտից կողմն եկայ, տալով նմա զերիս յիտանայ և 'ի Մովկանայ. և շինեաց նա անդ իւր բնակութիւն: Իսկ խուզունի ունի, յորդուոյն Լեկանայ, ել 'ի փապարս լեռինն, և շինեաց քաղաք իւրով անուամբն զԽուզունիս: Եւ անցեալ 'ի վերայ ժամանակս բազում՝ եղեն ամենայն ազգն հիւսիսոյ ընդ հարկաւ խաղրաց:

Եւ յետ այսորիկ աճեաց ազգն Ներբովթայ 'ի կողմն արեւելից, և յայտնեցաւ այր մի 'ի նոցանէ Արրիտան¹ աւուն. զորմէ ասեն թէ կապեաց աղանդովը² զիշխանն օձից յերկաթս, զկոչեցեալն Բիւրասայի, յանճնակ լեռինն Բայիսայ³, որպէս և զրեալ է 'ի մատենայն Պարսից: Սա արար ընդ հարկաւ զազգս բազումս, և տիրեաց տանն Պարսից, և առաքեաց զզօրագլուխն իւր 'ի ծննդոցն Ներբովթայ յերկիրն վրաց, որ եկեալ աւերեաց զքաղաքս և զերդքս, և կոտորեաց՝ զորո եգիստ 'ի խուղրաց, և տիրեաց երկրին: Սա շինեաց յեզր ծովուն զԴարուբանդ, որ է փակեալ-գուռն: Այս Արարմա⁵ շինեաց կրաշաղախ վրմբ զՄյիսիթա, և սկիզբն արար պարսպոյ յԱմրաղ լեռանէ մինչև ցգետն կուր: Եւ ոչ զիտէր տունն վրաց՝ որ է Գարթլ, զարուեստ կրոյ և քարի մինչև ցայս:

Իսկ 'ի բաժանելն Արրիտենոյ զհնազանդեալսն իւր՝ երից որդւոյն, եւ ըզ-Պարսիկս և զվրացիս միոյ որդւոյն, ոչ րոյ անուն էր Իարեգերախ⁶, Եւ Աղար-

մա կեցեալ իշխան վրաց տմա յուղւս, և զինի նորա ոյլ եւ չորք գլխաւորք փոխելոյն զտեղի նորա: Յետ որոյ անկաւ խռովութիւն յորդանն Աբրիտենոյ, և սպանին երկու եղբարքն միտրանեալք զԱրիտագրեախ: Եւ զտեալ ժամանակ վերք, ամին յօդնութիւն զՅօրեն, և սպանին զգլխաւորն Պարսից յանդի 'ի զբօսանս, և զայլ եւ զօրս նորա կատարեցին, և եղեն անհոգս 'ի Պարսից: Բայց երկիրն Ռանայ և Հիւսիթոյ մնաց առ Պարսից: Յետ այնորիկ զորմեալ զօրանայր թագաւորն Պարսից, որոյ անուն էր Քեկապոս. և եկն 'ի Մովկան և 'ի Հերեթ, և խորհէր մտանել 'ի Լեկեթս. ոյլ գլխաւորն Լեկայ էր ազգային խուզանիխոյ, և էր կախարդ. որ և զիւթութեամբ կուրացոյց զՔեկապոս և զօրս իւր. և զորման յետս, և ապա բացան աչք նոցա, և արարեալ ընդ հարկաւ զվրաց երկիրն՝ զնայինն:

Եայնմ՝ ժամանակի սիւսեցան զրոյցք զարմացման եթէ Մովսէս, բարեկամն մեծին Աստուծոյ, անցոյց ընդ ծովն կարմիր ազգս երկոտասան, բիրք վեց⁸, և կան 'ի Սինա անապատի, և ուտեն մանանայ՝ հոյ 'ի յերկնից իջեալ: Եւ լուեալ զայս՝ ամենայն հեթանոսայ, զովէին և օրհնէին զԱստուածն իսրայելի:

Ետուժ ժամանակի միաբանեալ ընդ Հայոց՝ ամենայն ազգին Թորգոմայ, 'ի բաց կացին 'ի Պարսից, ամրացուցեալ զքաղաքս և զզդեակս: Եւ զպարեալ ինկապոս՝ առաքեաց 'ի վերայ Թորգոմայ զզօրագլուխն իւր զՓարսարթոս զօրք բազմոք. և զնացեալ ընդ առաջ նոցա

1 Առ Խորենացոյ՝ Հրազէն անուանի, որ է Տիրիտուն:

2 Այս է՝ կախարդական հնարիք:

3 Առ Խորենացոյ՝ Իրմաւ ընդ: Տես զբովանդակութիւն առասպելն 'ի Խոր. էջ 131-136:

4 Բօր. Ըրդ յաշխա:

5 Բօր. Արարմա. լատագոյն Արդամաս, որպէս գրի 'ի Գաղատայոյն վախճանգայ:

6 Նոյն անուն է՝ և զոր վերայառք, կարծեմ, փառս ստորե գրէ Արիտագրեխ՝ ձայնաւորացն ընդ երեսարս փոխանակութեամբ:

7 Այսպէս առանդէ Որբէնան (ԳԵ-270) պանցս այսր ժամանակի. « Եւ էր կացեալ յայնմ ժամանակի պէտ աշխարհին վրաց Արդարմա պար-

սիկ, հրամանաւ Արրիտենոյ, որ տիրեալ էր Պարսից և վրաց և Աղուանից: Այս այն Արարմա է, որ շինեաց վերստին զՄյիսիթա, և պարսպեաց կրաշաղախ վրմբ, և եզ պարսպ յԱրմաղ լեռնէ մինչ ցգետն կուր: Յետ վախճանին սորա արք չորք տիրէին վրաց, և խոս վութիւն և ապականութիւն տիրէր ամենեցունց առ հասարակ, էր որ 'ի Քեքաւուս Թոսրովոյն, և էր որ զինի նորա 'ի Քուէ Խորովոյն: Եւ էին վերք 'ի մեծ վախ, և կային յուսահատեալք յամենայն կողմիցս »:

8 Արսիքն է՝ վաթսուռ հազարք, փոխանակ զի պարս էր զնէլ ըստ Թուոց մատենին գէթ վեցհարիւր հազարս:

Հայոց և վրաց, դռին զնոսա յԱտրպա-
տական, և հարեալ 'ի դիմի' կոտորեցին
յբազումս. և փախեալ փարաբորոտն
սակաւօք, եւ սրամտեալ քեկապոս,
արձակեաց զթոռն իւր, զորդին Բիււա-
բու. Գեղեցիկի՝ սպանելոյ 'ի թուրքաց.
որում անուն էր Գուէ-Խոսրով. և ոչ
կարացին դիմանալ նմա Հայք և վիրք,
այլ կոխան եղին ոտից նորա առ հա-
սարակ¹, եւ կարգեաց իւր գործակալս,
և շինեաց յԱտրպատական տուն աղ-
թից ըստ դեմին իւրեանց, և գնաց յեր-
կիր իւր. և ակսաւ կռուել ընդ թուր-
քաց, որք սպանին զհայր նորա: Եւ փա-
խեան 'ի նմանէ արք ոմանք 'ի թուրքաց՝
տուն քսան և ութ², և եկին առ տա-
նուտէրն Մցխիթոյ, և ինդրեցին 'ի նմա-
նէ քարոյր մի յարեւելոյ կուսէ քաղա-
քին, և պարսպեցին զնա տուն քնա-
կութեան իւրեանց, և կոչեցին Սարա-
կինէ, որ ասի երկաթահանք: Եւ զի
անպարապ էր Գուէ-Խոսրով 'ի Հայոց
և 'ի վրաց, յայսմանէ ոյժ առեալ կո-
տորեցին զիշխանսն Պարսից, և կազմէին
զամուրս:

Ի նմին ժամանակի եկին փախոտա-
կանք ոմանք 'ի Յունաց և յԱսորոց և 'ի
Խաղրաց, նեղեալք 'ի թշնամեաց իւ-
րեանց՝ յերկիրն վրաց. և ընկալան զնո-
սա յաղագս օգնելոյ նոցա ընդդէմ Պար-
սից: Զայնու ժամանակօք եկին և Հրեայ-
քն զերծեալք 'ի Նաբուգոդոնոսորայ,
որ գերեալ էր զԵրուսաղէմ³. և խըն-
դրեցին 'ի տանուտեառնէն Մցխիթոյ
տեղի հարկելոյ. և ետ նոցա 'ի վերայ

գետոյն Արաղոյ՝ աղբիւրն որ կոչի Զա-
նաւ, և արդ իսկ ասի Խեբրէ՝ վասն հար-
կելոյն: Եւ մինչև ցայս վայր հայերէն
(էր) լեզուն վրաց. և ապա սկսան այլ-
այլիւ յազգացն՝ որ բնակեցան 'ի մէջ
նոցա, և եղև ամենեցունցն խառնակել,
և յոյս միացեալ՝ որ այժմ ասի վրացե-
րէն: Եւ յայնմ հետէ ընտրեցին կրօնս
և վարս անպարկեչոս և զաղիր քան
զամենայն ազգ: Զի յամուսնութիւնն
ընտրութիւն ազգի ոչ առնէին, և զա-
մենայն զեռուն կայտառ ուտէին, և զճճիս
և զմեռեալս, և ոչ դոյր նոցա
գերեզման⁴:

Իսկ զկնի այսորիկ եկն դարձեալ այլ
ոմն թագաւոր Պարսից՝ Սպանդիար ա-
նուն, որդի վաշդապիւղոյ, 'ի վերայ Հա-
յոց և վրաց. և 'ի գալն յԱտրպատա-
կան՝ լուաւ բոլթ դուժի եթէ սպանին
ազգն թուրքաց զհօրեղբայր նորա, և
դարձաւ անդրէն 'ի թուրքաստան, և
հանգեան Հայք և վիրք: Զկնի այնորիկ
թագաւորեաց Պարսից՝ վահրամ, որդի
Սպանդիարին, որ և Արտաշէս⁵. որ ա-
ռաւել եղև զօրութեամբ քան զամե-
նայն թագաւորսն Պարսից, որ էտաւ ըզ-
բարեւրն, և ընդ հարկաւ արար զԱս-
րեսաան և զՅոյնս և զվիրս:

Եւ յայնմ ժամանակի խօսէին 'ի վիրս
վեց⁶ լեզու, հայերէն և խալդի, ասորի
և եբրայեցի, յոյն, և որ 'ի խառնից նո-
ցա հաւաքեցաւ՝ վրացին:

1 Այս ամենայն անցք յեղատակին և 'ի Նահ-
նուտէն Պարսից ոչ սակաւ ինչ պայլութեամբք
գիւպոց և փոփոխութեամբք անուանց:

2 Ս. Մարգէն, յեցեալ 'ի վկայութիւն Ստե-
փանու Որբելեան, զգալթականութեան զայս
նոյն համարի ընդ ձեռնից ձեռնակութեանցն, որք
յիտոյ ժամանակաւ Որբելեանք կոչեցան 'ի Վի-
րլս: Այս եղեակգրութիւն անձինք երկի. քանզի
ի Քաղաւածոյսն Վահրամեայ ըստ իմ անշնել
գաւ ասի զԹուրքաց (որք և պարզապէս թուրք
անուանին, քաղթեալք, որպէս կարծի, յաժմանց
Վլչիպ գետոյ), մինչդեռ Որբելեանն աւանդէ
զի « օգապարիկ երկվորք քաղթեալք լեալ ան-
ցանէն ընդ քաղաւմ ախարհօք... անցեալք ընդ
դուռն Գարիալայ »: Եւ զինչ հարկ կայցէ մի
և նոյն համարել, և ոչ 'ի նմին ժամանակի ու-

րիչ 'ի միմեանց երկուց գաղթականութեանց
տեղի ունել:

3 Ըստ Վուլկադային 600 ամեք նախ քան ըզ-
Քրիստոս. և ըստ Պոսիւէի ամք աշխարհի 147:

4 Զայսպիսի բարբարոսական վարս յերառա-
կեալ գտանեմք և 'ի Թորենացոյ՝ ևս և յազգա-
ախարհիս Հայոց նախ քան զԱրտաշէս Ի, եթէ
« Ըստ օրինակի հեռիսականաց կողմանց՝ շաղա-
կերութեամբ և այլովք այսպիսեօք կեցեալք », Բ. ԾԹ, 381:

5 Այսինքն՝ վահրամ, որ և Արտաշէս. որ է,
ըստ Վահուշտ պատմագրի վրաց, նայն ինքն Վիւ-
րոս մեծն, 530 ամեք նախ քան զՔրիստոս:

6 Պոսեթ թարգմանէ: Զամենայն ազգ լեզուաց:
Վայթմազ ք համաձայն ունի ընդ մերոյս օրինակի
միջ ևս...

ԳԼՈՒԽ Գ

Աղքատներ Աղքատների Մակեղանացոյ 'ի վերս, և կացուցանել զԱղքատ 'ի վերայ երկրին. — Աղքատի ընդ հարկաւ անել զագգսն շրթակայս. — Բաժանել Աղքատների զտերտրին իւր 'ի յորս մասուն, և կարգել ի խաւս 'ի վերայ ևցաւ. — Բանորիւնք Աղքատի և պատմամբորիւն վրաց' առանդորդարեանք փառնաւ. — Բաղադս կատարման երազոյն փառնաւ ազգայ և միաբանորեան ազգաց ընդդէմ Աղքատի. — Մահ Աղքատի և բազաւորել փառնաւ ազգայ. — Բաղադս գործոց փառնաւ ազգայ և մահաւան ևորս. — Արարաւ զՍայրարմակայ, որոյն փառնաւ ազգայ, և մահ ևորս :

Յայնմ ժամանակի ամբարձաւ մեծն Աղքատանդր, որդի Ներսանեբոյ ¹ Եզիպտացոց², յաշխարհին Մակեղանացոց, որ կալաւ ընդ ձեռամբ զերիս անկիւնս երկրի : Սա եկն յարեմոից առ հիւսիսիւ, և չրկեալ ընդ արեւելս³ եմուտ 'ի ծմակային երկրին, և էանց ընդ կովկասու լեւառն յաշխարհն վրաց ⁴. և հիացաւ ընդ զազիր կեանս նոցա : Եւ զի ետես ամրոցս բազումս, և աշխատեաց զգորս իւր ամիսս վեց յառնուլն զնոսա, զԴունդա, զԵտերիս, զՈւնձըրթե⁵ կառուցեալ ընդ քարին լաղասոյ, զԹուղարս⁶ 'ի վերայ գետոյն Սպերոյ, որ ասի Ճորոխ ⁷, զՈւրբնիս, զԿասաբ, զՈւփլիսցիլէս, որ ասի Տեառն բերդ, զՄցիլիթա, զԹաղքն⁸ որ Սարակինա կոչեցաւ, զՅիլիսեղիդ⁹ որ է Բերդ Մեծ, և

¹ Խորենացի. « Ներսանեբոսս այս վերջին թագաւոր է Մեղիպտացոց 'ի Մանեթոսի պատմաւ, զոր ոմանք հայր Աղքատանդրի ասացին » : Անշուշա յասելն մեղի 'ի նոսին իմանայ և զգրեց Պարթեւիտի Աղքատների, ոչ անմեան ինքեան եղելոյ, յորում ոճով իմն պատմի զաւելստ Ներսանեբոյն 'ի Մակեղանիս, և զամենայն հնարոյ Խորատարութեան զՈւլիսիպա մայր ցուպանելոյ Աղքատանդրի, մինչդեռ Փիլիպպոս հեռագոյն 'ի գործն պատեհազմի զապիւլալ կայր : Այս աւանդուլ իւր և առ բազումս 'ի հնոց գրասին, ուստի և ոչ խալառ խոտելի :

² Ի Թուրքիոյ յոյժ Թուրի ինձ միաբանել զընթացաւ արշաւանացն Աղքատանդրի, և զաղուլին ժամանակին³ ընդ դրեց աշխարհին Վրաց, որով և ընդ մասնելոյ նորս անձագը 'ի Վրաստան. Թող զի, որչափ Ժանթ ինձ, բաց 'ի պատմու-

զՊաւլոսի թաղն Հրեկոյ, զՈւլա, զՄայրաբերդն, զՇամուտէ, և զԿուր գետոյն բերդն⁴ Խունան. յորս եղիտ կր. ուղղոյ կորովիս. և 'ի սոսա յամենեւեան բաժանեաց զգորս իւր, և ինքն նստաւ 'ի տեղոյն⁵ որ կոչի Աստագի : Բայց ընդ բերդսն Թուղարոյն և Խունանայ ոչ մարտեաւ, զի անառիկ էին : Իսկ զՍարակինեցիսն պաշարեաց զերկոտասան ամիս, զի նախատեցին զԱղքատանդր, և ոչ դնէր ընդ նոսա դաշն, մինչ և ծակեցին զկակուղ անձաւ այրին ընդ այլ կողմն, և երին ամենեքին, և փախեան 'ի կովկաս 'ի գիշերի : Իսկ յայլոց անտի կոտորեաց զբազումս, և գերեաց կանայս և մանկոսն անմեղս, մինչ և ցերկոտասանամանս⁶ : Եւ կացոյց 'ի վերայ երկրին պատրիկ⁷ որ է աւագ, զայր մի Մակեղանացի⁸ Աղքատ կոչեցեալ, տուեալ նմա զորս հարիւր հազար, որք էին փրոտիտոսիկ⁹ քաջակորովք և բաւամարտիկք, որք և սաստիկ նեղէին զՅոյնս յաշխարհին իւրեանց. վասն որոյ հեռացոյց զնոսա անտի, և ետ 'ի ձեռս Աղքատի. և Աղքատ կացոյց 'ի նոցանէ ի խեցոյդ ընդ ամենայն երկրին վրաց : Եւ պատուիրեաց Աղքատանդր Աղքատի¹⁰ պատիւ գնել արեւ. գական և լուսնի և հինգ աստեղացն, և ծառայեցեան միոյ անտեսին Աստուծոյ¹¹ ստեղծողին երկնի և երկրի. և ըզնոյն օրինազրեւր ամենայն երկրի. քան զի ոչ գոյր քարոզ ճշմարտութեանն յաւուրսն յայնոսիկ :

Թեմն Աղքատանդրի¹² գտելոյ առ մեզ, չիք այլ ուրեք այսր յիշատակութիւն առ մատենագիրս : որք մանր Խառնեցին զգործոց Աղքատանդրի : Ոչ ինչ գծուարիմ հաւանել եմի միոյ 'ի զորավարացն նորս կարացեալ իցէ մասնել յերկիրն վրաց, և զամենայն աւանդեալսն 'ի մատենագրեւ¹³ յանուն Աղքատանդրի գործեալ. բայց ինքն Աղքատանդրի գալ պաշարել զՄցիլիթա¹⁴ առաջադրապատում երեւի :

³ Յօրինակին Զարեհ :

⁴ Ըստ Վարդանիւկայ և ըստ Թարգմանութեան Պրոսէի ստորոք Թուրի լինել շեղիպատան. Դայո. այլ 'ի գաղաղաբարոյէ օրինակին, կարծեմ, Ժի ընթերցեալ է Ժե :

⁵ Προστατός — Առաջադատ. զինուորք⁶ որ առ Յոյնս յառաջնում գծի բանակին կարգէին :

Իսկ Ազոն քակեաց զամենայն ա-
մուրսն յաշխարհին վրաց, թողեալ
չորս բերդս 'ի դրանն վրաց, լցեալ զօ-
րօք զնոսա: Եւ արար ընդ հարկիւ զԳ-
լեկս, զՊոս և զԲաղրիկս. և տիրեաց
ամենայն վրաց 'ի կողմանց Հերեթոյ
և Բերդահոյն մինչև 'ի ծափն Սպերոյ:

Եւ Աղեքսանդր թագաւոր ամս եր-
կոտասան հնազանդեալ զաշխարհ, և
յերկատասան ամին¹ արձակեաց յաշ-
խարհն իւրեանց զպատանդան² որք էին
ընդ նմա 'ի ծառայութիւն: Եւ բաժա-
նեաց զիշխանութիւն իւր չորից ազգա-
կանաց իւրոց: Անտիոքոս³ որ զԱնտիոք
չինեաց⁴ ետ զԱսորեստան⁵, և Հոռոմոսի⁶
զՅոնիս յարեմոից, որ շինեաց քաղաք
իւրով անուամին, և Բիւզանդոսի⁷ որ
զԲիւզանդիոն շինեաց⁸ ետ զԹրակիա,
զԲիւթանիա և զՎիրս. և զրեաց առ
Ազոն⁹ զի ծառայեացէ զԲիւզանդոս: Եւ
զՊղատոն (Պաղոմէոս) արձակեաց յե-
զիպտոս, տալով նմա զԱղեքսանդրիա.
և ինքն վճարեաց զկեսանն:

Իսկ զկնի այնորիկ մոռացաւ Ազոն
զհաւատոն տուեալ յԱղեքսանդրէ, և
արար երկու կուռք արծաթի, Գացիմ¹⁰
և Գայիմ¹¹ անուանք նոցա, և պաշտէր
զնոսա: Եւ էր այր բռնաւոր և արիւ-
նասէր, և ծառայէր Բիւզանդայ: Եւ եգ-
օրէնս Ազոն իւրոյն, զի որ դք գտանէ
'ի վրաց ազգէ ընչեղ և հասակեղ և
աջողեալ¹² սպանցեն զնա, և առցեն
զինչսն: Եւ դարձաւ 'ի Յունաց, և ե-
հար 'ի նոցանէ զբազմամս¹³:

Յայնժամ ընտրեցաւ այր մի յոր-
դուոյն Մցխիթոյ¹⁴ փառնաւազ¹⁵ անուն,
պարսիկ մօրէ Սպահանեցւոյ. և էր նա
որդի քեռ Սամարոսի, որ տանուտէր էր

Մցխիթոյ 'ի զալն Աղեքսանդրի, զոր և
սպանն իսկ: Եւ էր փառնաւազ մոռ-
ւոր և որսորդ աջողաձեռն. և եղև ծա-
նօթ Ազոնի, Եւ մայրն փառնաւազոյ ա-
սէր¹⁶ մի յայտնել զինքն Ազոնի, այլ տար
զիս, ասէ, յԱսպահան առ եղբարս իմ,
և ապրիս դու ընդ իս. և ոչ ախորժէր
փառնաւազ թողուլ զհայրենիս իւր:
Եւ տեսնէր երազ, որպէս թէ կայցէ
նա 'ի տան նեղագունի, և խորհէր ե-
լանել, և ոչ կարէր. և յանկարծակի
ծագէր շող արեգականն ընդ պատու-
հանն, և պատէր զմիջով նորա, և քար-
շէր զնա 'ի դուրս: Եւ յեղանել¹⁷ մերձ
տեսնէր զինքն արեգականն, և սրբէր
զբիրանն, և օժանէր զերեսս իւր. և զար-
թուցեալ զարմանայս: Եւ զնէր ապա
'ի մօտ¹⁸ թէ երթամ յԱսպահան¹⁹ բարի
լինի ինձ, և խորհեցաւ զնալ: Եւ 'ի նոյն
աւուրն եղանէր յորս միայն, և ետես
երէ մի 'ի հեղեղատն Տփխեաց, և ե-
հար զնա նետիւ, և անկաւ երէն 'ի կիճ²⁰
մի քարի. և նա զկնի նորա զնաց: Եւ
եմուտ արեգակն և մնաց անդ զգիշերն.
և եկն անձրև ձիւնախառն, և խնդրէր
փառնաւազ հովանի. և ետես անդ խը-
ցեալ քարամբք մուտ մի 'ի հին ժամա-
նակաց, և էր խախտեալ. և բացեալ
ետես այր մի ընդարձակ, լցեալ զան-
ձիւք ոսկեղինօք և արծաթեղինօք. և
խնդացեալ յիշեաց զերապն: Եւ չըբաւ
կոյեաց զմայրն իւր և զերկուս քորան.
և պեղեցին զգանձն հնգետասան զի-
շերս²¹, և պահեցին ընդ ձեռամբ 'ի զան-
խաւ տեղիս յայլ և յայլս: Եւ առա-
քեաց փառնաւազ առ Բուլիս²², և առե-
ցնա. կոյ մօտ առ իս²³ խաչն. թէ կա-
միս²⁴ գամ առ քեղ, և տանիմք զսա 'ի

¹ Երբնակին 'ի հագնաւսն ափս, որ վերապէ է
յայտնի, քանզի ժամանակ թագաւորութեանն
Աղեքսանդրի ձգեցաւ բովանդակ ընդ ամս երկու
աստուէ և ընդ ամիս ութ:

² Վախթանգ յաւելու: « Եւ զՀայաստան և
զամենայն երկիրն արեւելից »:

³ Այսինքն՝ տոտարացաւ, և 'ի Յունաց, ըստ օ-
րինակին զոր առ Վրացաւ, իւսժաբարոյ վարե-
լով և ընդ նոսա, ըստ բանից Վախթանգայ:

⁴ Աստի սկիզբն առնու առաջին հարստու-
թիւն փառնաւազիանց կամ Գարթլիսեանց: Առ
Իւրաքանչիւր 'ի նոցանէ կարգեցուցաւ 'ի ստորն:

ըստ Պրոսպէ, զժամանակ և զամս թագաւորու-
թեանն, սկիզբն արարեալ 'ի փոռնաւազայ, որ
եկաց 303-337 ամօք նոյն քան Չփրիստոս, և
թագաւորեաց զամս 65:

⁵ Եօր. Կիճէ:

⁶ Պրոսպէ թարգմանէ 'ի հին Գիլգիշի Վախթանգ
հինգ գիլգիշ:

⁷ Առանց կանխեալ բանից զառնէս²⁵ իբրև ծա-
նօթ զոմն յիշէ զնա, որ թուի իշխան դք լինել 'ի
քարթլիսեան սկիզբնէն:

⁸ Եօր. Կառաք առ իս:

բան. արդ, է նա հակառակ Ազնոյ, և յոյն մեր բարւոյ՝ տայ մեզ յազմութիւն¹։ Եւ իրրե լուաւ փութիս՝ խնդաց և ասաց. Ե՛կ առ իս, և ստանամք՝ ի խաշնէդ զօրս ընդդէմ Ազնոյի², և զուարճանայ տունս վրաց. և ձեռն տան մեզ Յոյնքն, զի ապստամբեաց ի նոյսնէ Ազնոյ։ Եւ չորաւ փառնաւազ ընտանեօքըն իւրովք առ փութիս, և ընկալաւ զնա ինդութեամբ, և ասէ ցնա. Ի նախ, նեաց տանուտերաց տանն վրաց ես դու, և վտիշ է քեզ իշխանութիւնն. և արդ, զու տէր, և ես ծառայ քո։ Եւ նոյնհետայն ազգ արարին լիկաց և Օսից. և յոյժ ուրախ եղեն, որպէս ձանձրացեալք ի հարկաարութենէն Ազնոյի։ Եւ ժողովեալք ի միասին՝ եկին առ նոսա բազմութիւն յոյժ հեծելոց. նոյնպէս եկին և յեգերաց։ Լուաւ զայս Ազնոյ, և ժողովեաց զօրս իւր. և հազար այր հառուածեալ ի զօրաց նորա՝ գնաց առ փառնաւազ, որք էին Յունաց։ Իսկ Ազնոյ անվստահ եղեալ ի մնացեալ զօրսն, փախեաւ յամուրսն կլարճէթոյ։ Իսկ փառնաւազ չորաւ ի Մցխիթա, և էառ զնա, և զչորս բերդն որ առնէթեր, զամենայն վիրս յամի միում։ Եւ արձակեաց դեսպանս առ Անտիոքոս բազում ընծայիւք, և խընդրեաց օգնութիւն ընդդէմ Յունաց. և խոստացաւ ծառայել նմա։ Եւ Անտիոքոս ընկալաւ զբանս նորա յօժարութեամբ, և անուանեաց զնա որդի իւր. և առաքեաց նմա թագ, և հրամայեաց իշխանացն Հայոց օգնել նմա։

Իսկ ի գալ միւսոյ ամին, միաբանեցաւ Ազնոյ ընդ Յունաց, և արար ժողով բազմութեան հեծելոց՝ ի վերայ փառնաւազայ։ Եւ նա զիրսն ժողովեաց. և եկն նմա զօր յԱնտիոքոս։ Եւ յառաջեաց քան զԱզնոյ ի քաղաք և յերկիրն

Արտահանու, որ յայնժամ ասիւր փախաց—Քաղաք. և անդ դիպեցան միմիանց. և յազմեցաւ Ազնոյ, և մեռաւ ի տեղւոյն. և հարսն զօրքն Յունաց, Եւ զնաց փառնաւազ ի կողմանս Յունաց, և գերեաց զԱնձի, և զԱնձուրա և զԵլեկացիս, և դարձաւ ի կլարճէթ, և էառ զնա, և եկն ի Մցխիթա մեծաւ ուրախութեամբ. և զրաւեաց զամենայն գանձն Ազնոյի, և մեծացաւ յոյժ, Եւ ետ զքոյր իւր ի կնութիւն Սոաց թագուորին, և զմիւսն փութիսոյ. և ետ նմա ի Գերոյթոյն ցեւրիանոյ³, միջնածովէն մինչև յլեառն մեծ, որոյ ներքոյ կան Էգերացիք և Սոնք. և անհոգացաւ ի թշնամիայ։ Եւ փութիս շինեաց զբերդն փութի։

Եւ սահմանեաց փառնաւազ կողմնաւալս ութ, և սպարապետ մի ի Լեխս, որ շինեաց երկու բերդ՝ զՇարան և զԻւմոյ. և զերկրորդն առաքեաց ի կախէթ, և զերրորդն ի Բերդահնոյ մինչև ցՏփիլիս, և զԲաշէնքն՝ որ է Գարդաբան. և զչորրորդն առաքեաց ի Շամշոյտէ, և ետ նմա ի Սյակուրեթոյ մինչև ցՏաշիր և ցԱպրցք⁴. և զհինգերորդն առաքեաց ի Ծուռդիս, ի փարանոյ մինչև ի զլուխն կուր գետոյ, որ է Ջաւախէթ, և ցԱրտահան. և զվեցերորդն առաքեաց յԱւնձրիս, տալով նմա ի Տայոց⁵ մինչև ցԱրսիան, և յԱստանայ զվոյն մինչև ցԾովն. և զութերորդն⁶ արձակեաց ի Քուճաէթ և յեգեր. և կացոյց սպարապետ մի ի Տփիսեաց. և յԱրագոյ մինչև ցՏայոց դուռն, որ է Ներքին փարթլ։ Եւ յամենեցունց զայր հարկ և հնազանդութիւն թագաւորութեանն, Եւ ամին ի կնութիւն փառնաւազայ ի Դուրծկայոյ՝ յազգէն կովկասի։ Եւ կարգեցաւ աշխարհն նման թագաւորութեանն Պարսից. և ոչ ընդ-

¹ Բովանդակ այս բանք անուշտ այլաբանաւ կան իմն ունիցին իմաստս։

² Խառնակ է բանս. կամայց թերեւ տաւել զի ի ձեռն խաշնն՝ զօր ժողովին ընդդէմ Ազնոյի։

³ Այսպէս յօրինակին. Իսկ Պրոսէ թարգմանէ Եւ ի Գարճէնքն Եւսեմայ։

⁴ Երբինակին Աւուր, որ յայտնի լիւրպակ է

ընդօրինակողին։

⁵ Ըստ Պրոսէի՝ հայ թարգմանիչն աստանօր և դարձեալ փոքու ստորեւ. զՏաւիս—Քարն վրաց շփառէ և ընդ Տայոց աշխարհին։

⁶ Երբինակին պակասին սահմանք եւ թերերորդին, որ անկաներ ի կլարճէթ, յԱրսիանէ մինչև ցԾովն, ըստ Քաղաւածոյիցն Վախմանդայ։

դիմացան Յոյնք, զի անպարապ էին 'ի
Հռովմայեցւոյն : Եւ պարսպեաց փառ-
նաւազ զՄցխիթա քաղաք, և զաւե-
րեալ ամուսնն յԱղեքսանդրէ : Եւ արար
պատկեր մի մեծ յանուն իւր, և նա
ինքն է Արմազ : զի 'ի պարսիկ լեզուն
Արմազ կոչէին զփառնաւազ : և կան-
գնեաց զպատկերն 'ի զլուսն ֆարժը-
սայ, որ ասի մինչև ցայժմ լեւառն Ար-
մազ : Քսան և Եօթն ամաց ¹ էր 'ի թա-
գաւորեւն իւրում, և վաթսուն և հինգ
ամ թագաւորեաց խաղաղական և ու-
րախական կենօք, և ծառայէր Անտիո-
քոս արքայի : Զայունն և զգարունն առ-
նէր 'ի Մցխիթայ քաղաք, և զամառն
'ի Զուռախէթ, և զմեծն ² 'ի Գանչէնան .
և ըստ պահու և ժամանակի մասնէր 'ի
կլարջք և յեզրիս, հողալով զօգուտ աշ-
խարհաց, զի այր հմուտ և իմաստուն
էր նա : Եւ զհազար ուր եկեալ առ նա
յԱղոնոյ՝ բաժանեաց 'ի գաւառս Վը-
րաց, և անուանեաց զնոսա Աղոնա-
ցիս, և բարի առնէր նոցա : Եւ ամե-
նայն տունն Վրաց զսէին պատկե-
րին, և ասէին . Գահուլթին յուսոյն մե-
րոյ, զի եղև մեզ թագաւոր յազգէն
Քարթլոսոյ նախնոյն մերոյ : Եւ եղև որ-
դի փառնաւազայ, և կոչեաց զանուն
նորա Սայուրմակ ³, և էր փառնաւազ ա-
ռա ին թագաւոր յազգէն Քարթլոսոյ .
սա ետ հրաման ամենայն երկրին խո-
սել զլեզուն Վրաց ², և մեռաւ, և թա-
ղեցաւ առաջի կոսոյ իւրոց Արմազայ :

Եւ թագաւորեաց որդի նորա 'ի նոյն
ամին . և խորհեցան իշխանքն Վրաց
սպանանիլ զՍայուրմակ ³, զի մի ծա-
ռայեսցեն ազգացն իւրեանց, այլ օտա-
րի, որ զք ամբառնայ զգլուխ իւր : Եւ
իմացաւ Սայուրմակ, և առեալ զմայրն
զնայ 'ի Գուրծուկէթ առ եղբարս մօր
իւրոյ : Իսկ Աղոնացիքն կոչեցեալ զօրքն

չորան առ նա՝ վասն երախտեաց հօր
նորա : Եւ կոչեաց առ ինքն զՍայուրմակ
դաւորն յօգնութիւն . և չքաւ և տի-
րեաց երկրին զիւրութեամբ . և սատա-
կեաց զթշնամիս իւր, և ոմանց եթող
զյանցոսն . և մեծայոյց զԱղոնացիս,
և նուառտացոյց զՎրացիս . և ած զբազ-
մայեալ կովկասաբազգին զհասարակն
և բնակեցոյց 'ի Մթշուլէթ՝ որ Սուա-
նէթ . և 'ի սոցանէ արար նախարարս՝
հաւատարիմ՝ կոչելով : Սա արար պառ-
կերս չորս, Ալիխնոյ և Դանանոյ՝ 'ի
վերայ ճանապարհին Մյխեթոյ ⁴, Եւ
ած զդուստր Պարտաւայ իշխանին՝ իւր
'ի կնութիւն՝ պարսիկ ազգաւ . և ծնաւ
նմա երէւ դուստր . զմին ետ Մրուա-
նայ ⁵ մօրաքեռորդոյ կնոյ իւրոյ պարս-
կի, և անուանեաց որդի իւր, և զմիւսն
եա որդւոյ Քուլին, որ էր հօրաքեռու-
րի իւր : Եւ Սայուրմակն կեցեալ ամս
բազումս՝ մեռաւ :

ԿԱՌԻՒ Դ

Յաղագս գործոց Մրուանայ արքայի .
Յաղագս թագաւորութեանն Փառանդումայ, և
մտածանկոյ 'ի Վիրս գիրօն Պարսից . — Այս-
տամարային վրաց 'ի փառանդումայ օգ-
նութեամբ Հայոց, և յաղագս թագաւորութեան
Արքակայ՝ որդոյ արքային Հայոց, և որդոյ
նորա Արտակայ . — Վրէժխնդարին Պարսից
'ի վրաց վասն արեանն փառանդումայ . — Յա-
ղագս թագաւորութեանն Բարտեւի և մանուսն
նորա, և որ ինչ անցք գկնի մանուսն նորա
անցին 'ի Վիրս, մինչև ցրագաւորութիւն Մր-
ուանայ, և որդոյ նորա Արքակայ . — Պառե-
լագմ Արքակայ ընդ Աղրիկայ, և յաղագս թա-
գաւորութեանն սուր . — Մեռնոյ Քրիստոսի Տեա-
սրն մերոյ, և յաղագս անցիցն անցելոց առ
Հրեայս վրաստանի . — Գալուստ արքոց առա-
քելոցն Անդրէի և Սիմոնի 'ի սահմանս վրաց,

¹ Յօրինակին բառն և հնգ ամաց, վերջակն փոփոխ-
մամբ է և և ասուից, ուղղեցաւ 'ի Վաթթանդայ :

² Յաւելու աստանոթ Պրոսէ 'ի թագաւորութեանն
իւրումընդ և զստան հնաբեւ, որ չիք յօ-
րինակի մտնում : Եւ զի այլատարապէք են ասուք
վրացեաց զինուորականացն և քահանայից, մօր-
թի համարել, ըստ առանդութեանն ազգին, զգե-
նուորացն հնարեալ Փառնաւազայ զտուս :

ՊրԵԱ Դ .

³ Սրկորդ արքայ, քարթլուեան, Ն. Բ. 237-
162, ինքեաց 75 ամ :

⁴ Աշուշա 'ի միասին Թուրքով և զերկոսին
նախալիշեալն զԴայիմ և զԴայիմ : Անուանցս
այսոքիկ : Ալիխնա և Դանանա, Թուրք յիշե-
ցուցանել զանուանն նոյնանիւն զԱնահիտն Հա-
յոց և զԻմանայն Հռովմայեցոց :

⁵ Յար. Մրուայ :

և նախատակարիւն վիրիւնյա, և յաղագս Ս. Անդրէի գործոցն յեջրիս և այլուր. — Յաղագս բաժանելոյ Աղբիւրկայ զբազաւորութիւն իւր՝ երկուց որոյցոց խորց, և յաղագս աւերմանն Երուսաղեմի՝ ի վեպատիւնե, և գաղթիոյ մասին Հրէից ի վրատումն:

Եւ թագաւորեաց Մրուան¹ ի տեղի նորա, այր իմաստուն և քաջ, և անձամբ գեղեցիկ: Իսկ Դուրծուկեցիքն մոռացեալ զուխան՝ ելին ի դուրս, և միտքանեցան ընդ Չարթաղքն² ընդ բնակիւն եղովասու, և գերեցին զհոխեթ և զհազալէթ: Յայնժամ Մրուան ժողովեաց զհաւատարիմս իւր զհեծեալ և զհետեակ, և գնաց ի վերայ Դուրծուկէոյ. և եղև մարտ սաստիկ, և պարտեցան Դուրծուկքն և հարան. և եմուտ Մրուան յերկիրն, և էառ զԴուրծուկ և զճարթալ, և զգուռն կրազմ, որ կայր անդադար Բալայ³, և եկն ուրախութեամբ ի Մցիսէթ: Եւ մեռաւ Անտիոքոս թագաւորն Ասորոց և Բաբելոնի, և թագաւորեաց ի Հայք Արբակ. և ետ Մրուան զգուռսր իւր՝ որդւոյն Վարբակայ, և մեռաւ Մրուան:

Եւ թագաւորեաց որդի իւր փառանջում⁴, որ շինեաց զբերդն Ադէն, և կանգնեաց պատկեր ի յԱդէն. և շինեաց քաղաք ի հախէթ՝ գնեկրէս: Եւ յետ այսորիկ մեծարեաց զմիսն պարսկադէն, և շինեաց նոյա տեղի՝ որ արդ ասի Մոգթա⁵, և եղին տուն կրակի:

Եւ բարկացան Վիրք. և խնդրեցին ի Վարբակայ Հայոց արքայէ, զի տացէ

նոցա զորդի իւր թագաւոր, զի մեր թագաւորն, ասեն, պարսիկ եղև, և մոռացաւ զհաւատ մարց իւրոց, և պաշտէ զհայրենի կրօնն⁶, եւ թագաւորն Հայոց ուրախութեամբ դարձոյց զգեսպանսն: Եւ լուաւ փառանջում, և էաժ զօր ի Պարսից, և ուստի կարաց՝ ժողովեաց, և ել ընդդէմ թագաւորին Հայոց: Եւ վարբակէս Հայոք և վրոք մարտեաւ ընդ փառանջում ի գաւառին Տաշրայ, և սպան զնա, և կոտորեաց զզօրս նորա իսպառ: Եւ թագաւորեցոյց Վրաց զԱրբակ որդի⁷ իւր, որ ունէր կին զգուռսր Մրուանայ⁸, և աջողեցաւ թագաւորութիւն նորա. և շինեաց ամուրս բազում, և ամրացոյց զպարիսպն Ջաւահիթոյ՝ քաղաքին Ծուսնդացոց. և այսպէս աշխղութեամբ կեցեալ մեռաւ:

Եւ թագաւորեաց Արտակ⁹ որդի նորա ի վերայ Վրաց ամս երկուս: Յաւուրս սորա եկին Պարսիկք վրէժխնդիր արեանն փառանջումայ. և ոչ կարաց Արտակ պատահել նոցա վասն բազմութեանն, այլ ամրացաւ ի նոցանէ. և նշքա զորս գտին յարձակ տեղիս՝ առին և գնացին:

Չկին Արտակայ թագաւորեաց որդի նորա Բարսոն¹⁰, իսկ որդին փառանջումայ սնաւ ի Պարսս, և առեալ օգնականս՝ գայ ի վերայ Բարսոնայ. և յղէ պատգամ տա իշխանսն Վրաց՝ ի բաց կալ ի Բարսոնայ. և ոչ լուան նմա, այլ կուռեցան ամիս մի առընթեր Խուսնայոյ՝ ընդ Մրուանայ. սակայն յաղ-

1 Ի Մրուանայ սկսանի երկրորդ հարստութիւնն ներքովթեան. և այս Մրուան Ա. փեսայ Սայուրմակայ՝ եկաց երրորդ արքայ Վրաց, 162-112 Ն. Ք. և իշխեաց զամս 50:

2 Նոյն ընդ ճաբեայ, զորս յիշէ փոքու ոտորէ:

3 Այսպէս խառնակ և անիմաստ յորինակին մերձ ինչ արեգոք ընթեանուլ ոչ խոյ անդ առ Խոբաւայ: Վրախանդ ունի այսպէս. « Եւ յօրինեաց անդ գրուին կրաշաղկափ վիմօք, զոր և Դարուբալ (Դարուբանդ?) սնուանեաց »:

4 Զորրորդ արքայ, ներքովթեան, 112-93 Ն. Ք. եկաց յիշխանութեանն 19 ամ:

5 Ար է Տաւ Մոգայ:

6 Պրոսէ Թարգմանէ զառս զայստիկ այսպէս. « Oubliant la foi de son pays, ne suit

plus la religion paternelle », որ յայտնի լիւր պակ է. քանզի Փառանջում էր ի փառնաւադէան մօրէ (ի գասրէն Սայուրմակայ), զորոյ զկրօնն մոռացեալ, պաշտէր զհայրենի կրօնն զՄրուանայ, որ էր յազգէն պարսիկ կնոջ Սայուրմակայ:

7 Աստի սկիզբն երրորդ հարստութեանն Վրաց, արշակունի. Արբակ հինգերորդ թագաւորեաց 12 ամս, 93-81 Ն. Ք.:

8 Յօրինակին՝ Վրաւայ:

9 Վեցերորդ թագաւոր, արշակունի, իշխեաց 15 ամս, 81-66 Ն. Ք.:

10 Եւթներորդ արքայ, արշակունի, իշխեաց 33 ամս, 66-33 Ն. Ք.:

թիցան, և մեռաւ Բարտոն 'ի պատե-
րազմին: Էւ զի ոչ ունէր որդի, այլ
դուստր մի, զոր տուեալ էր յամուսնու-
թիւն որդւոյն¹ Քուլխոյ, զի լինիցի
ժառանգ արքայութեան նորա. և արար
զայն վասն հաճելոյ զվիրս, որ ոչ կա-
մէին զօտար ազգի թագաւորութիւնն,
այլ զփառնաւազունիան միայն. այլ և նա
սպանաւ 'ի նմին պատերազմի, որում
անուն էր Քարթամ: Էւ կին նորա՝
դուստրն Բարտոնի յի զուով՝ զնաց 'ի
Հայս. և ծնաւ որդի, և կոչեաց զնա Ադ-
րիկ: Իսկ Մրուան մտեալ 'ի վիրս, տի-
րեաց ամենայն աշխարհին, բռնութե
հնազանդեալ զամրացեալսն 'ի զղեա-
կոս, և երգմամբ արտաքս բերեալ յա-
նառիկ տեղեացն: Էւ 'ի Շամշուտոյ հա-
նեալ զկինն Բարտոնի՝ կին արոր զնա,
որ էր դուստր Արքակունեաց: Էւ ծնաւ
որդի, և կոչեաց զնա Արքակ: Էւ կե-
ցեալ Մրուան² ամս սակաւ՝ մեռաւ,
և թագաւորեաց որդի՝ նորա Արքակ³:

Իսկ Ադրիկ սնեալ 'ի Հայս, եղև այր
անձնեայ և այրդեակ. 'ի պատերազ-
մունսն գտեալ՝ որ ընդ Հայս և ընդ Ա-
սորիս, կոտորեալ 'ի նոցանէ յորով
Մումբերիզա: Սա առեալ զզորս Հայոց՝
մարտեաւ ընդ Արքակայ յերկիրն Թուե-
ղեաց, որ է Խաղկաց. և օր մի ողջոյն
կռուեալ սուսերօք՝ խորտակեցին զնո-
սա. և ոչ ոք դարձոյց 'ի նոցանէ թի-
կունս: Էւ հանգեան զգիշերն, և 'ի վա-
ղիւն կռուեցան երկաթակուռ մահա-
կօք, իբրև զուռունս դարբնաց՝ որ բա-
խեն 'ի վերայ սալից. և ոչ այնպէս դար-
ձան 'ի միմեանց: Ապա առեալ զաղե-
ղունս՝ նետաձիգ ելցեն առ միմեանս. և
եհար Ադրիկ նետիւ զլանջս Արքակայ՝
եղբօր մօր իւրոյ, և սպան զնա. և դար-
ձան վիրք 'ի փախուստ: Էւ յաղաչանս
անկեալ Հայոց Ադրիկ՝ արգել 'ի կոտո-

րելոյ զվրացիսն. Զի ես եմ, ասաց, այ-
սուհեաւ թագաւոր նոցա՝ շնորհիւդ
ձեր, Էւ ամենայն զօրքն վրաց անկեալ
երկիր պագին Ադրիկայ⁴, և զրին 'ի
զլուս նորա զթագն Արքակոյ. և մի ե-
ղեն Հայք և վիրք և տունն Աւանայ: Երե-
սուն ամաց էր 'ի թագաւորեմն իւրում,
և քառասուն և հինգ ամ⁵ թագաւորեաց
'ի վերայ վրաց, առեալ զդուստր թա-
գաւորին Հայոց իւր 'ի կնութիւն:

Ի սորին առաջին ամին ծնաւ Յիսուս
Քրիստոս 'ի Բեթղեմէ՝ Հրէաստանի:
Էւ եկն համբաւ առ Հրէայսն Մցխե-
թոյ, եթէ եկին թագաւորք 'ի Պարսից,
և գերեցին զԵրուսաղէմ, և սուգ առին
Հրեայքն. և զկին բազմաց⁶ լուան՝ ե-
թէ ոչ 'ի գերութիւն Երուսաղէմի, այլ
յրնծայաբերութիւն մանկան միոյ կու-
սութեամբ ծնելոյ եկին նոքա, և խըն-
դացին յոյժ: Իսկ զկին ամաց երեսնից
եկին դեսպանք 'ի կողմանս արեւելից
հիսիսոյ, եթէ ընծայեալն 'ի մոգուց
մանուկն՝ եկեալ 'ի հասակ առն կա-
տարելոյ՝ քարոզէ զինքն որդի Աստու-
ծոյ. արդ, որք միանգամ են յազգէս
մերմէ իմաստունք և տեղեակք օրինաց
մերոց՝ եկեացեն, զի գնասցուք վասն
բանիս այսորիկ: Էւ լուեալ զբանս՝ զնա-
ցին իշխոս՝ ի Մցխիթոյ, լուսնկնոս կարա-
նեցին: Էւ 'ի յերթալն նոցա գիպեցան
աւուրն մեծի ուրբաթու չարչարանացն
Տեառն. և նոքա բերին զպատմութեանն
Տեառն 'ի Մցխիթա:

Էւ յաւուրս նորին թագաւորի Ադրե-
կայ՝ եկին երկուք ոմանք յերկոտասան
առաքելոցն, Անդրէ և Սիմոն կանանա-
ցի, յԱփխազէթ և յեգրիտ. և կատա-
րեցաւ սուրբն Սիմոն 'ի քաղաքին Նի-
կսիիս, 'ի սինսուն Յունաց: Էւ սուրբն
Անդրէաս դարձուցեալ զեգրիտ՝ գնաց
առ կլարոնք⁷: Էւ լուաւ Ադրիկ, և բար-

¹ Այն է՝ առ մի ոք յազգէն Քուլխոյ, և ոչ
որդւոյ ըստ առաջին նշանակութեան բառին:

² Աւթերոյք. թագաւոր, ներքովեան, իշ-
խաւ 10 ամս 33-23 Ն. Ք:

³ Խնեբորք. թագաւոր, ներքովեան, իշ-
խաւ 20 ամս, 23-3 Ն. Ք:

⁴ Տասնբորք. թագաւոր, քարթլոսեան, իշ-
խաւ 57 ամս, 2 ամսք Ն. Ք, և 55 Ն. Ք:

⁵ Վախթանգ յիսուն և եօթն ամս կարգէ թա-
գաւորութեանն Ադրեկայ:

⁶ Եօր. Բայ. առջ. Վախթանգ զնէ յերկուսուն
աթ. Պրոսէ ընթեռնաւ Է. առջ:

⁷ Զայս ամենայն անց քարոզութեան առա-
քելոցս առ երկարօրէն 'ի Քաղուստոյսն Վախ-
թանգոյ:

կացաւ . և առաքեաց դարձոյց անդրէն
'ի կուռս գեղրիս . և թաքուցին զխաչ
և զպատկեր խաչին ¹ . և մեղադիր եղև
ոստիկանին կլարջից՝ զի խաղաղութե
որձակեաց զԱնդրէ :

Ի սոյն ժամանակս Պարսք ապստամ
բեցին 'ի Մակեդոնացւոց , և եղին իւ
րեանց թագաւոր զԱթիան իմաստուն :

Այս Ագրիկ թագ եղ երկուց որդւոց
իւրոց , բաժանելով նոցա զերկիրն . ըզ
փարթլ բազում սահմանօք՝ ետ Բարաու
սոյ . և խռնանայ մինչև 'ի կլարճէթ՝ ետ
Փարթամանայ , և մեռաւ : Ի սոցա թա
գաւորութեանն Սպասիանոս կոչսրն

¹ Անչ իմանալ պարս իցէ որիչ 'ի խաչէն
զպատկեր խաչին : Աթիթանգ ունի « զեսչն և
զպատկերս » :

Հռոմայ գերեաց զԵրուսաղէմ ² , Եւ եւ
կին 'ի Հրէից անտի փախստականք , և
յարեցան յառաջին Հրեայն Սցխե
թոյ . ընդ նոսա էին և որդիքն Բարաւ
բա աւագակին , զոր Հրեայքն հոյցէին
'ի Պիղատոսէ փոխանակ Տեառն մերոյ ,
Եւ Բարաոսն և Քարթամ ³ կային 'ի
հնազանդութիւն թագաւորացն Հայոց ,
յԱգրկայ սկսեալ . և աւելի՛ Արմազու
թագաւորքն օգնէին Հայոց՝ ընդդէմ
կալով թշնամեաց նոցա :

Շարունակելի .

² Յե օթմանաներորդի տմին Յ . Ք :

³ Մեռասաներորդ սրբոյցութիւն , քարթլ .
սեան , ամբ իշխանութեան 17 , 55-72 Յ . Ք :

Ա Ռ Ա Ր Ե Գ Ա Կ Ն

Արեգակն է լոյս աչաց

Եւ լուսատու տիեզերաց .

Է կենսատու համատարած

Հողոյ , ջրոյ , օդականաց :

Բամից խմրից լուսաւորաց՝

Իշխան եւ տէր եւ կացուցած .

Ի յԱստուծոյ օրինադրած

Լինիւ ստեղծիչ ժամանակաց :

Եւ բաժանող եղանակաց ,

Զօրն , ըզլաբաթն , զամիսն ամաց .

Շրջադայնալ ըստ սահմանաց

Միջի վերջին ժամանակաց ,

Գաս շրջանիւն երկուտասան

Բոլոր գնտից երկնից լրման .

Ի յոր պուրճն մօտենաա՝

Տաս ըզբարին քո անխափան ,

Աստուածաբալ պատկեր բոլոր ,

Կարակնածեւ մեծ լուսաւոր ,

Բնութիւնը քո է ջերմ և չոր ,

Մթնահալած լուսայորդոր :

Կաս ի չրջել բոլոր տարին

Երեք հարիւր վաթսուն թուին .

Հիւսիս հարաւ բարձր եւ ցածին

Հարիւր ութսուն աստիճանին :

Նորօք չափես զիեանս ամենի

Երկար և կարճ ժամանակի .

Ըստ հրամանաց քո Արարչի ,

Արշափ տընալ նոցա լինի :

ՈՍԿԵՓՈՐԻԿ